

## ՆԱՆՈՓՈԽԱԴՐԻՉՆԵՐԻ ԼՈԿԱԼԻԶԱՑԻԱ ԻՍՈՒՆՈՅԻՍՏՈՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ՄԿՆԵՐԻ ՈՐՈՇ ՀՅՈՒՄԱԿՃՔՆԵՐՈՒՄ

Աբրահամյան Ս. Ս.<sup>1</sup>, Բրոզ Պ.<sup>2</sup>, Սեմերջյան Ա. Բ.<sup>3</sup>, Սահակյան Ի.Կ.<sup>1</sup>,  
Թումասյան Ն.Վ.<sup>1</sup>, Սիսակյան Հ.Ս.<sup>4</sup>, Հունգիկեր Պ.<sup>2</sup>

<sup>1</sup> Հ.Հ. ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ, Երևան, Հայաստան

<sup>2</sup> Բազելի համալսարանական կլինիկայի ինտենսիվ օգնության բաժանմունք, Բազել, Շվեյցարիա

<sup>3</sup> Երևանի պետական բժշկական համալսարանի բժշկական կենսաբանության ամբիոն,  
Երևան, Հայաստան

<sup>4</sup> Երևանի պետական բժշկական համալսարանի սրտաբանության ամբիոն, Երևան, Հայաստան

*Տվյալ աշխատանքի նպատակն է եղել կիրառել մի մեթոդ, որը թույլ կտա հայտնաբերելու կամ բացառելու նանոփոխադրիչների ազդեցության հնարավոր թունավոր կողմերը՝ in vivo պայմաններում: Բիոթիևիլացված նանոփոխադրիչով ներարկված մկների հյուսվածքներում նանոփոխադրիչների ազդեցության տեղաբաշխման հայտնաբերման համար, մեր կողմից, կիրառվել է ավիդին-բիոթիև-պերօքսիդազային իմունահիստոքիմիական մեթոդը:*

*Ստացված տվյալները նախնական պատկերացում տվեցին բիոթիևիլացված նանոփոխադրիչի իմունառեակտիվության մասին՝ մեր կողմից հետազոտված մկների հյուսվածքներում: Ի տարբերություն ստուգիչ կենդանիների, փորձարարական կենդանիների մոտ բիոթիևիլացված նանոփոխադրիչների դեմ իմունառեակտիվ որոշ բջջային կառուցվածքներ են հայտնաբերվել՝ ուղեղում, փայծախում, լյարդում, թոքերում և մակերիկամներում: Իսկ սրտում, երիկամներում և թիմուտում բիոթիևիլացված նանոփոխադրիչով-իմունառեակտիվ կառուցվածքներ չեն հայտնաբերվել:*

*Այս տվյալները ծառայում են որպես բացառիկ ուղեցույց:*

*Անհրաժեշտ են հետագա հետազոտություններ՝ բիոթիևիլացված նանոփոխադրիչների տարբեր չափաբաժինների օգտագործմամբ, դրանց ներարկումից հետո տարբեր ժամանակահատվածների ուսումնասիրմամբ և այլն՝ առավել համապատասխան իմունահիստոքիմիական մեթոդի կիրառմամբ:*